ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Արտահայտիչ կարդալու ուսուցումը տարրական դասարաններում

Հետազոտող ուսուցիչներ՝ Նաիրա Թադևոսյան

Գոհար Գևորգյան

Սիրանուշ Դավթյան

Ժաննա Ղանդիլյան

Անահիտ Բարսեղյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……3
Արտահայտչականության տեղն ու դերը կարդալու գործընթացում ……7
Արտահայտիչ կարդալու ուսուցման միջոցներն ու ձևերը ……9
Արտահայտիչ միջոցների տեղն ու դերը ……11
Կետադրության տեղն ու դերը ուսուցման գործում ……15
Եզրակացություն ……18
Գրականության ցանկ ……20

«Ընթերցանությունը մի զբոսախնջույք է,
որին մասնակցելու համար հեղինակը բերում է բառեր,
իսկ ընթերցողը՝ գաղափարը:»
Պոլ Ռիկեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտահայտիչ ընթերցանությունը կարևոր դեր է խաղում կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման համակարգում: Առանձնակի կարևորություն ունեն տարրական դասարանների արտահայտիչ ընթերցանության պարապմունքները, որտեղ տեղի է ունենում երեխաների կողմից գրական լեզվի յուրացման գործընթացը: Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակները երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը: Ինչպես նշված, այնպես էլ մայրենի լեզվի քերականությունից տարրական գիտելիքների հաղորդումը դիտվում է որպես գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու, լեզվամտածողության և հայեցի հոգեկերտվածքի ձևավորման կարևոր գործնական միջոց:

Կարդալու որակական հատկանիշները

Կարդալն ունի մի շարք որակական հատկանիշներ,որոնք իրար հետ սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: Հենց այդ հատկություններով էլ բնութագրվում է լավ կարդալը: Լավ կարդալու որակներն են.

- ճիշտ կամ անսխալ կարդալ
- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ
- վարժ կամ սահուն կարդալ
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ
- արագ կարդալ

«Լավ կարդալը եղանակ ունի,նա մի տեսակ գնացական երգ է:
Յուրաքանչյուր շեշտը և կետը զանգակի պես հնչում են երեխայի ականջին ,
հոգեբուխ երգի նման թափանցում մարդկանց հոգու խորքերը,
թրթռացնում բոլոր նուրբ լարերը նրա մոտ»:
Ղ. Աղայան

Կարդալու այս հատկանիշները սերտորեն և փոխադարձաբար կապված են միմյանց հետ և լրացնում ու ամբողջացնում են միմյանց, ուստի երկարատև ու հետևողական աշխատանքի միջոցով է, որ հնարավոր է լինում աստիճանաբար մշակել ու կատարելագործել այդ հմտություններից յուրաքանչյուրը: Առաջին և երկրորդ դասարանների աշակերտների մեջ կարդալու որակական այս չորս-հինգ հատկանիշները դեռևս միմյանց հետ ներքին սերտ կապակցության մեջ չեն գտնվում, որի պատճառով էլ կարդալիս չեն համակցվում իրար հետ,միասնական ձևով հանդես չեն գալիս: Որպեսզի կարդալու ուսուցման սկզբնական շրջանում նրա որակական հատկանիշների միջև եղած այս առանձին հակադրությունները չարվեն, այդ չորս-հինգ հատկանիշները պետք է զարգացնել միաժամանակ և աստիճանաբար՝ կարդալու հմտությունների մշակման աշխատանքները, երբեք չանջատելով երեխայի մտավոր ու բարոյական զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներից:

Ճիշտ կամ անսխալ կարդալը՝ կարդալու հիմնական բաղադրամասերից մեկն է: Ճիշտ կարդալ ասելով պետք է հասկանալ ձայնով, պարզ ու հստակ ընթերցումը, որի ընթացքում տառերի, վանկերի ու բառերի բացթողումներ, ավելացումներ, տեղափոխություններ չեն լինում, երբ բառերի արտասանությունը բարբառային չէ և համապատասխանում է գրական հայերենի արտասանության ու շեշտադրության արդի պահանջներին[1]:

Տարրական դասարաններում ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել աշակերտների խոսքի մաքրման, բառապաշարի ճշտման ու ակտիվացման վրա, որոնք իրենց հերթին համապատասխան հող են ստեղծում նոր բառերի ու դարձվածքների յուրացման համար: Գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերը ճիշտ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է դնել ոչ թե ուղղագրական կանոնի, այլ ուղղախոսական նորմաների գիտակցումը:

Սա նշանակում է, որ ուսուցման ժամանակ պետք է առաջ քաշել ոչ թե գրության ու արտասանության տարբերությունն ու հակադրությունը, այլ ճիշտ կարդալու՝ կանոնավոր ու արտահայտիչ կարդալու կարողության մշակումը: Ճիշտ կարդալու հմտությունը երկարատև ու հետևողական աշխատանքի արդյունք է, ուստի աշակերտների մեջ այդ հմտության մշակմանը պետք է ձեռնամուխ լինել առաջին իսկ բառերի ընթերցումից սկսած:

Լուրջ, հետևողական աշխատանք պետք է տանել հնարավոր սխալները կանխելու և թույլ տված սխալներն ուղղելու համար:

Սխալը պետք է ուղղել սխալ կարդացող աշակերտի միջոցով, իսկ եթե նա չի կարողանում՝ կարելի է դիմել դասարանի օգնությանը: Պետք է հասնել այն բանին, որ ուսուցչի մատիտի թխկոցը կամ սխալ կարդացած բառին նախորդող բառի ընթերցումը աշակերտներն

[1] Ջ. Գյուլամիրյան ,«Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա »,2006,էջ՝116

ընկալեն որպես սխալ կարդացածն ուղղելու համար հնչած ազդանշան։

Վարժ կամ սահուն կարդալ ասելով հիմնականում պետք է հասկանալ կարդալու այն նորմալ արագությունը, որի ժամանակ ապահովում է ընթերցածի բովանդակության լրիվ ըմբռնումը թե՛ ընթերցողի, թե՛ լսողների կողմից, և ոչ երբեք կարդալու մեխանիկական արագությունը։

«Ուսուցչի գլխավոր հոգատարությունը ոչ թե կարդալու արագությունը,

այլ ճշտությունը պետք է լինի, իսկ արագությունը կգա ինքնըստինքյան՝

որպես արդյունք կարդալու բազմաթիվ ու բազմապիսի վարժությունների»։[2]

Կարդալը վարժ չի կարող համարվել, եթե կարդացողը վանկերի ու բառերի կրկնություններ,բառերից ու բառակապակցություններից հետո տրվող անհարկի դադարներ ու ընդմիջումներ է թույլ տալիս, որոնք խանգարում են բառի մեջ վանկերի միաձուլմանը, նախադասության մեջ բառերի կապակցմանը, որի պատճառով խախտվում է կարդալու բնական ընթացքը, տոնն ու հնչերանգը։

Վարժ կարդալ ասելով պետք է հասկանալ ամբողջական բառերով, չընդհատվող, հնարավորինս արագ ու սահուն ընթերցումը։ Վարժ կարդալու ժամանակ կարդալու արագությունը պետք է մոտենա սովորական խոսակցության արագությանը՝ պետք է հաշվի առնել նաև արտահայտիչ կարդալու պահանջները բավարարելու նկատառումով առանձին հատվածները կարդալիս տեմպի արագացումը և դանդաղեցումը։

Աշակերտի մեջ վարժ կարդալու կարողության մշակման և այն աստիճանաբար հմտության վերածելու համար ամենից առաջ պետք է զարգացնել նրանց խոսելու օրգանները, շնչառությունը և ձայնին տիրապետելու կարողությունը։ Այս ամենին նպաստում է նաև ուսուցչի և ընկերների կարդալուն հետևելը, դերերով, խմբով և ընտրովի ընթերցանությունը։

Կարդալը պետք լինի նաև գիտակցական։ Գիտակցական կամ հասկանալով է այն ընթերցումը, որի ժամանակ ընթերցողը ճիշտ,լրիվ և պարզ կերպով հասկանում է իր կարդացածը։

Կարդացողին լսելիս անմիջապես կարելի է ասել՝ նա հասկանում է իր կարդացածը,թե ոչ։ Եթե կարդացողը չի հասկանում իր կարդացածը, ապա չի շեշտում որոշ բառեր, չի փոխում կարդալու տեմպը, ձայնի բարձրությունն ու ուժգնությունը, ճիշտ չի, կարողանում արտահայտել իրար հետ կապված բառերի ու նախադասությունների անջատումը ձայնը միալար ու միապաղաղ է լինում։[3]

[2]Գ. Էդիլյան ,Հայոց լեզվի մեթոդիկա ,Թիֆլիս,1923,էջ՝122։

[3]Ջ.Գյուլամիրյան,Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,2006,էջ՝118։

Արագ կարդալը ևս կարդալու որակական հատկանիշ է։Այն համարվում է մեծածավալ լրատվություն ձեռք բերելու լավագույն միջոցներից մեկը,որը հնարավորություն է տալիս քիչ ժամանակում շատ լրատվություն տալ և ստանալ։

Կարևոր հանգամանք

Կարդալու արագությունը բանավոր խոսքի տեմպին հատուկ արագությունն է, որի ժամանակ ընթերցվող նյութի բովանդակության ընկալումը առաջ է անցնում վերարտադրումից։ Արագ կարդալու ուղղությամբ աշխատանք կարելի է տանել (կամ ակնկալել արագ կարդալ) միայն այն ժամանակ, երբ աշակերտն ազատ կարդում է ամբողջական բառերով և ունի լայն ընթերցողական տեսադաշտ (աչքի մեկ ընդգրկումով կարող է տեսնել և կարդալ մի քանի բառ)։

«Արագ ընթերցանությամբ անկարելի է ուսանել լավ կարդալ, այնինչ լավ կարդալով՝ միշտ էլ կարելի է ուսանել արագ ընթերցանություն»։[4]

Կարդալու որակական հատկանիշներից է **արտահայտիչ կարդալը։** Կարդալը արտահայտիչ է համարվում այն ժամանակ միայն, երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի ելևէջներով ,դադարներով ու փոփոխմամբ վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ։[5]

Արտահայտիչ կարդալը աշակերտի մեջ զարգացնում է գեղեցիկ արտասանելու և խոսելու կարողություն, մշակում նրա ձայնն ու լսողությունը,նպաստում է շնչառության կանոնավորմանը, ազնվացնում է աշակերտի զգացմունքներն ու գեղարվեստական ճաշակը և այլն։

Այսպիսով, ընթերցանության առաջին և հիմնական նպատակը տարրական դասարաններում կարդալու ուսուցումն է, կարդալու կարողության որակական հատկանիշների ձևավորումը։

Այս առումով ուսուցիչը հիմնականում ուշադրություն պետք է դարձնի աշակերտների կարդալու կարողության ամրապնդման ու զարգացման, կարդալու որակական հատկանիշների հետագա կատարելագործման ուղղությամբ տարվող աշխա-տանքներին, որպեսզի աշակերտները սովորեն էլ ավելի լավ կարդալ, պահպանել անսխալ, հասկանալով, սահուն և արտահայտիչ կարդալու պահանջները։ Պետք է որոշակի տարբերություն դնել առաջին և երկրորդ դասարաններում տարվող աշխատանքների միջև՝ ինչպես կազակերպչական, այնպես էլ մեթոդական առանձնահատկությունների, հետապնդած

[4]Այս մասին մանրամասն տե՛ս Ջ.Գյուլամիրյան ,Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները,«Նախաշավիղ»,2001,թիվ3-4,էջ 30

[5]Ա. Բահրաթյան,«Մանկավարժական թերթ»,1879,էջ՝32-33։

նպատակների ու խնդիրների։ Այդ տարբերությունները պետք է պայմանավորված լինի ոչ միայն տարիքային առանձնահատկություններով, այլև կարդալու որոշակի առաջընթացով։

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԿԱՐԴԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արտահայտչականությունը լավ կարդալու հիմնական ու իր կարողությամբ ամենաբարձր առանձնահատկությունն է, առանց նրա կարդալը կատարյալ համարվել չի կարող։

Արտահայտչական տեսակետից գրավոր խոսքը բանավորի համեմատությամբ զգալի պակասություններ ունի,որոնք թուլացնում են նրա ազդեցությունը ,դարձնում պակաս ներգործուն։ Գրավոր խոսքի մեջ բացակայում է խոսողը՝ իր ձայնի ելևէջներով ու դադարներով,դեմքի արտահայտությամբ և այլն։ Գրավոր խոսքի այդ մեծ բացը մասամբ լրացնում է կետադրությունը,որի ճիշտ վերարտադրումը շունչ ու ոգի է տալիս անկենդան բնագրին,այն մոտեցնում է բնական խոսքին։ Գրավոր խոսքի հենց այս վերակենդանացումը կարդալու արտահայտչականությունն է։ Խոսքի տեխնիկայի հիման վրա է, որ հնարավոր է դառնում տիրապետել խոսքի արտահայտչական միջոցներին։ Խոսքի տեխնիկան բաղկացած է չորս հիմնական բաժիններից.

1. շնչառության
2. առոգանության
3. ձայն
4. ուղղախոսություն

Ուսուցման և ուսումնասիրության սկզբնական շրջանում այդ բաժինները միմյանցից սահմանազատվում են, իսկ գործնական կիրառման ժամանակ նրանք արդեն միասնական են։ Արտաքին (արտասանված) խոսքի հիմքը շնչառությունն է։

1.**Շնչառության** վրա կատարվող աշխատանքի էությունն է՝ զարգացնել շնչառության ավելի բնական, ճիշտ, առողջ, շուտ չհոգնող նպատակահարմար ձև, որը պետք է նպաստի ձայնի կանոնավոր զարգացմանը և խոսքի արտասանության դժվարությունների վերացմանը։ Ձայնի մաքրությունը, կոռեկտությունը, գեղեցկությունը և դրա փոփոխությունները (տոնային երանգները) կախված են ճիշտ շնչառությունից։ Երբ դուք ներշնչում եք, թոքերը լցվում են օդով, կրծքավանդակը լայնանում է, կողերը բարձրանում են, և դիաֆրագման իջնում է։ Օդը պահվում է թոքերում և քիչ է օգտագործվում խոսքի ժամանակ։

2.Առոգանությունը պետք է նպաստի խոսքի և առանձին ձայնավորների ու բաղաձայնների հստակ ու պարզ արտասանությանը։

3. Ձայնի մշակման աշխատանքը ավելի բարդ է։Անհրաժեշտ է մեծ ջանասիրություն ու համառություն։ Ձայնի մշակմանը պետք է նախորդի ձայնի թերությունների վերացումը, օրինակ ՝ ռնգախոսությունը, կոկորդային ձայնը և այլն։ Այդ ուղղությամբ կատարվող

վարժությունների նպատակն է գտնել ձայնային ապարատի ճիշտ դիրքը, ձայնին տալ ճիշտ ուղղություն և ճիշտ օգտագործել շնչառությունը: Առոգանության և ձայնային ապարատի մշակումն ու զարգացումը կախված է համակարգված վարժություններից:

Օրինակներ. Ձայնի տոնայնությունը բարձրացնելու և իջեցնելու վարժություններ.

ա / «Ցատկ վարժություն»

Այս վարժությունն օգնում է զարգացնել ձայնի ճկունությունը: Ուսուցիչը երեխաներին խնդրում է պատկերացնել, որ նրանք հեռուստացույցով դիտում են բարձրացատկի մրցումները: Մարզիկի ցատկը միշտ կրկնվում է դանդաղ շարժումով,ուստի ցատկողի շարժումներն ավելի սահուն են լինում: Դուք պետք է փորձեք ձեր ձայնով թռիչքային գիծ քաշել: Ձայնը պետք է ազատ և հեշտությամբ բարձրանա և իջնի:

բ/ «Քայլարշավ» վարժություն.

Այս վարժությունն ուղղված է ձայնի բարձրությունը տարածելու ունակությանը: Ուսուցիչը երեխաներին ասում է, որ կարդալիս պետք չէ արագ ձայնը բարձրացնել, անհրաժեշտ է, որ ձայնը բավարարի բոլոր տողերին: Ընթերցանության ամեն գիծ դուք պետք է պատկերացնեք, որ «ձայնով եք քայլում» ուղիղ դեպի արևը, ձեր ձայնով փոխանցեք վերընթաց շարժումը:

Խոսքի տեխնիկայի չորրորդ բաժինը **ուղղախոսությունն** է, որն ուսուցանում է բառերի ուղիղ, առանց աղավաղման և ճիշտ շեշտադրությամբ արտասանությունը: Խոսակցական բարբառը կամ խոսքի արտասանության առանձնահատկությունը յուրացվում է դեռ մանուկ հասակից: Հաճախ մեծ դժվարությամբ է հաջողվում վերացնել արմատացած սխալ արտասանությունն ու բարբառը:

Կարդալու տեխնիկայի հետագա զարգացման ու կատարելագործման համար ամենօրյա հետևողական աշխատանք պետք է տանել կարդալու որակական հատկանիշները պահպանելու կարողությունը հմտության վերածելու ուղղությամբ, թե՛ անցած նյութի հարցման, և թե՛ նոր նյութի մշակման ժամանակ անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել կարդալուն, տարբերակված պահանջներ առաջադրել արդեն ծանոթ ու անծանոթ բնագրերի

ընթերցման ժամանակ։ Որոշակի արդյունքների հասնելու համար,ուսուցիչը հետևողականորեն պետք է պահպանի մի շարք պահանջներ, որոնք նպաստելու են կարդալու տեխնիկայի զարգացմանը։ Հաճախ պետք է ընդհանուր քննարկման նյութ դարձնել այս կամ այն աշակերտի կարդալու տեխնիկան, կարդալու որակական հատկանիշները, որպեսզի աշակերտի մեջ կարդալու հատկանիշների նկատմամբ որոշակի չափանիշներ մշակվեն։ Կարդալու տեխնիկայի կատարելագործման համար հատուկ տեղ պետք է տալ արդեն անցած նյութերի վերընթերցումներին ու անգիր հանձնարարված նյութերի ճիշտ ու գեղեցիկ արտասանությանը,որոնք երեխայի մեջ մշակում են կարդալու ճաշակ։

Խոսքի թերությունները վերացնելու, արտահայտչականություն, լավ, պարզ ու հստակ արտասանություն ձեռք բերելու համար առաջին հերթին պետք է ունենալ ճկուն խոսքի ապարատ։

Խաղ վարժանք.

Փորձեք, արտասանելով լեզվի պտույտներ կատարել և սահմանել տարբեր կատարողական առաջադրանքներ (խոսքի ներքին կարգավորումներ)։

Այս տեքստի խոսքային կատարման մեջ ես ուզում եմ կատակ խաղալ, ուզում եմ բողոքել, ուզում եմ պարծենալ և այլն։

Օրինակ՝

1. Հնձի՛ր, թքի՛ր, իսկ ցողը ցողի հետ, և մենք տուն ենք։
2. «Արձանագրության մասին արձանագրությունը արձանագրվել է արձանագրությամբ»։

ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Արտահայտիչ կարդալը սերտորեն կապված է գիտակցորեն կարդալու հետ,կարդալը գիտակցորեն չի կարող լինել,եթե արտահայտիչ չէ և՝ ընդհակառակն։

Կարդալու գիտակցականության հիմնական տարբերակիչը արտահայտչականությունն է։

Արտահայտիչ կարդալու ուսուցման հիմնական միջոցներից մեկը ուսուցչի տված օրինակն է։ Այդ աշխատանքում առաջին պլան է մղվում ուսուցչի տված կենդանի օրինակի ցուցադրումը։ Այն ամենը, ինչ առանձին-առանձին ու ամբողջության մեջ վերցրած առաջադրում է աշակերտներին, նրանց համար միանգամայն նորություն է ու անծանոթ, և նրանք երբեք չեն կարող ինքնուրույն հասնել դրանց ըմբռմանը։ Ուսուցիչն իր կարդալու օրինակով կամ ձայնագրություններով աշակերտներին ոչ միայն ցույց է տալիս, թե բնագրի որ մասն ինչպես պետք է կարդալ,այլև պետք է սովորեցնի, թե ձայնի փոփոխությամբ, դադարներով ու հնչերանգով ինչպես վերարատադրել այս կամ այն միտքը։

Սակայն միայն ընդօրինակելով հնարավոր չէ արտահայտիչ կարդալ սովորեցնել, քանի որ այդ դեպքում աշակերտը կդադարի ինքնուրույն մտածել։ Աշակերտը պետք է լավ հասկանա բնագրի բովանդակությունը և ըստ այդմ էլ ընտրի նրա ընթերցման բովանդակությունը։ Կարելի է օգտագործել ուսուցչի կամ աշակերտների կարդալու եղանակի վերլու-ծությունը,որպես կենդանի օրինակի վրա բնագրի ընթերցման արտահայտչական հնարավորությունների ու ձևերի գիտակցման միջոց։ Երբ աշակերտները վերլուծում են ու ցույց են տալիս, թե նյութի այս կամ այն հատվածը կամ նախադասությունը ինչպես կարդացվեց և ինչու, նրանք գիտակցում են արտահայտչական ձևերի ու բովանդակության, կետադրական նշանների ու ձայնի փոփոխության կապը և դրանց տեղին ու ճիշտ օգտագործումը։ Երբեմն այսպիսի վերլուծությունները երեխաներին ավելի շատ բան են տալիս, ավելի ճիշտ ու հեշտ են սովորեցնում արտահայտիչ կարդալ, քան մյուս դեպքերում։

Արտահայտիչ կարդալու ուսուցմանը մեծապես նպաստում է նաև դերերով ընթերցանությունը։ Կարելի է կիրառել «Ընթերցողի թատրոն» մեթոդական հնարը։ Այն ամենաարդյունավետ ու կիրառելի ձևերից մեկն է և օգտագործվում է գրեթե բոլոր դասարաններում։ Այն օգտագործվում է, որպես արտահայտչականության մշակման միջոց։ Ընթերցողի թատրոնը մի միջոց է, որը հնարավորություն է տալիս երեխաներին տեքստը բազմաթիվ անգամներ առոգանությամբ ընթերցելու, որն էլ կբարելավի նրանց ընթերցանության սահունությունը։ Այն նման է ներկայացում խաղալուն, որն էլ նպաստում է, որ սովորողները ըմբռնեն, հասկանան կերպարի անհատականությունը և

իրադարձությունների հուզական տոնը։ Ներկայացման ավարտից հետո, ուսուցիչը հարցնում է դասարանին իրենց տպավորությունների մասին։ Նա ուղղորդում է, որպեսզի նրանք արտահայտեն իրենց մտքերն այն մասին, թե իրենց ինչն է դուր եկել, առաջարկել, թե ինչպես կարելի է ընթերցանությունն ավելի սահուն և արտահայտիչ դարձել։ [6]

[6]«Ընթերցանության կարողությունների ձևավորում տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա», դասավանդման ձեռնարկ։Հրապարակվել՝ «Քայլ առ քայլ» հիմնադրամի կողմից,2014թ.,էջ՝33։

Դերերով ընթերցանության ժամանակ յուրաքանչյուր աշակերտ աշխատում է մտնել իր դերի մեջ, ճիշտ արտահայտել իրեն հանձնարարված դերը, իր ասածը արտասանության եղանակով, տոնով ու ձայնի որակով համաձայնեցնել մյուսների ասածին, ընդհանուր խոսքի մեջ գտնել իր ճիշտ տեղը։ Դերերով կարդալու համար պետք է ընտրել սովորաբար արդեն մշակված բնագրերը, որոնց մեջ կա երեք և ավելի գործող անձ։ Դերերը բաժանելուց հետո խմբերին հնարավորություն է տրվում կարդալու տեքստը մի քանի անգամ՝ միասին որոշելու համար, թե ինչպիսին են կերպարները, ինչպես պետք է հնչի կերպարների խոսքը։

Դերային խաղերի ընթացքում պահանջվում է դերային կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի կերպարի մեջ։ Ամենաարդյունավետ խաղի տեսակ է ամենահսկական թատերական ներկայացումը, որտեղ ևս տեղի է ունենում դերային կերպարանափոխություն։ Ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ։ Աշակերտը ապրում է մի իրավիճակ,որը չի եղել իր կյանքի ընթացքում, և դա դաստիարակում է նրան, սովորեցնում ապրել հասարակական կյանքով։

Օրինակ՝ դասարանը բաժանվում է խմբերի, և ուսուցիչն առաջադրում է՝«Ո՞վ ավելի շատ կհիշի, կմտածի,տեքստում կգտնի…. և այլն»։ Ավելի հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը, եթե գիտելիքների կրկնությունը կամ տեքստի վերարտադրումն իրականացվեն «Բարձունքի նվաճումը» խաղի տեսքով։ Գրատախտակի մոտ հրավիրվում են թիմերի ներկայացուցիչները, որոնք ճիշտ պատասխանելով տրված հարցերին, բարձրանում են բուրգի աստիճաններով։ Այն նկարված է գրատախտակին։

Կարելի է կազմակերպել իր ծավալով և թեմայով բարդ խաղ՝ «Գրաֆիկական ֆուտբոլ»։ Դասարանը բաժանվում է չորս խմբի ։

Առաջին խումբ՝ «Հարձակվողների խումբ»,որը հարցեր է պատրաստում հակառակորդի համար։

Երկրորդ խումբ՝ «Պաշտպանների խումբ», որը պատասխանում է հարցերին։

Երրորդ խումբ՝ «Փոխանցողների խումբ», նրանք կարող են հարցը փոխանցել չորրորդ՝ «Դարպասապահներին», եթե նրանք չեն կարողանում հարցին պատասխանել։

Յուրաքանչյուր սխալ պատասխանը «գոլ» է համարվում։

ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ

Խոսքի հնչման օրինաչափություններն ընդգրկում են բառապաշարի, ոճի, ուղղախոսության, շեշտադրության և հնչման արտահայտչականության չափազանց հետաքրքրական ու բարդ խնդիրները: Խոսքի ոճական կառուցվածքը, առաջին հերթին, կախում ունի նյութի բառապաշարի հարստությունից, որը ձեռք է բերվում գեղարվեստական և այլ գրականության ուսումնասիրման շնորհիվ:

Ընթերցանություն՝ ահա լավագույն ուսումը:

Ալեքսանդր Պուշկին

Խոսքն ավելի արտահայտիչ է դառնում, երբ մեր ձայնը չի հնչում միանման , միապաղաղ, այլ բարձրանում է և իջնում: Մեղեդու երանգախաղերը ձայնի մեջ կոչվում է բարեհնչյունություն՝

ա/ նորմալ, որը վերաբերում է քերականորեն և տրամաբանորեն նորմավորված խոսքին

բ/ կենդանի, որն հանդիսանում է ամբողջ իմաստային-հուզական համակցության արդյունք:

Նորմալ բարեհնչյունությունը մեզ սովորեցնում է կիրառել ձայնական որոշակի ելևէջներ, որոշակի, կոնկրետ, կայուն և կանոնի ուժ ստացած դեպքերում. օրինակ՝ ստորակետից առաջ ձայնը բարձրանում է, վերջակետից առաջ՝ իջնում, հարցական բառի վրա զգալիորեն բարձրանում և այլն:

Կենդանի խոսքի բարեհնչյունության բնորոշ կողմերն են ՝ ձայի համարձակ և ցայտուն ելևէջները,իրենց հուզական երանգավորումներով. օրինակ՝

- բարկությունը՝ սրընթաց, չոր, խիստ,
- ուրախությունը՝ թեթև, հուզված,
- գաղտնիքը՝ շշուկ, խորհրդավոր և այլն:

Խոսքի արագությունը կոչվում է տեմպ:

Տեմպը կարող է լինել ՝ դանդաղ, միջին, արագ և շատ արագ: Սովորական խոսակցության ժամանակ յուրաքանչյուր անձնավորություն ունի իր խոսելու նորմալ տեմպը: Գեղարվեստական ընթերցումը նորմալ տեմպի շեղումն է: Տեմպը խոսքին կյանք տվող, շունչ տվող կողմ է, առանց որի խոսքը կդառնա անկենդան ու դալուկ:

Արտահայտիչ միջոցներից է նաև **շեշտը:** Պետք է տարբերել բառաշեշտը տրամաբանական շեշտից: Եթե բառաշեշտը դրվում՝ բառի վերջին վանկի ձայնավորի վրա, ապա տրամաբանական շեշտը դրվում է նախադասության որևէ բառի վրա և շեշտվող բառի օգնությամբ նախադասության միտքն իմաստավորվում է: Այն պետք է արտահայտի մեր

կամքը, տրամաբանորեն իմաստավորի նախադասության հիմնական միտքը և ձայնի հնչման տեսակետից, նախադասության մյուս անդամների վրա, լինի ավելի ցայտուն և արտահայտիչ: Խոսքի մեջ շեշտն արտահայտում է մեր կամքը, հուզմունքը, վճռականությունը, էներգիան, որով խոսքին տալիս է ճշտություն, հստակություն, ակտիվություն և հուզականություն:

Խոսքը երբեմն ընդհատվում է, և այդ ընդհատումները կոչվում են **դադարներ:** Խոսքը հնչում է արտաշնչման ժամանակ, իսկ ներշնչման ժամանակ պետք է լռել:

Խոսողը դադարի ժամանակ ոչ միայն հանգստանում է, այլև ժամանակ է ունենում կենտրոնանալու, կանոնավորելու իր մտքերը, կապ է ստեղծում խոսքի ու մտքի միջև:

Ռիթմ կոչվում է զանազան տևողության հնչյունների հաջորդականությունը, որը կազմվում է ուժեղ ու թույլ հնչյունների, վանկերի ուժեղացմամբ՝ շեշտերի ու ձայնային ելևէջների օգնությամբ: Ռիթմն արտահայտում է մեր վերաբերմունքը դեպի հաղորդվող մտքերն ու զգացմունքները: Իր համաչափ բաբախումով նա կենդանացնում է իր խոսքը: Ռիթմը ցայտուն կերպով երևում է ոտանավորի մեջ: Ռիթմիկ խոսքը արտահայտչականաության բնագավառում ծով հնարավորություններ է ստեղծում, և խոսքի հնչման վարպետության լավագույն ցուցանիշներից մեկն է: Յուրաքանչյուր մարդ ունի ձայնային անհատական երանգ, որը կոչվում է տեմբր: Դա ձայնի այն հատկությունն է , որի շնորհիվ մենք խոսողին կարող ենք ճանաչել ոչ թե տեսնելով, այլ լսելով:

Բանավոր խոսքի արտահայտիչ հնչման վարպետությունը պահանջում է նշված վեց տարրերի՝ բարեհնչյունության, տեմպի, շեշտի, դադարի, ռիթմի և ձայներանգի /տեմբրի/ օրգանական կապը:

Արտահայտիչ խոսքը և արտահայտիչ ֆիզիկական շարժումները միմյանց օգնում են: Արտահայտիչ դիմախաղը ծնում է արտահայտիչ խոսք: Դիմախաղը, շարժումները նպաստում են խոսքի արտահայտչականությանը, սակայն չպետք է մոռանալ մի հիմնական կանոն՝ դիմախաղ և շարժումների մեջ լինել չափավոր ու համեստ, և որպեսզի դրանք ներգործող լինեն, պետք է չափավոր գործածվեն:

Արտահայտիչ կարդալու ուսուցմանը նպաստում են նաև խմբով կարդալը, որի ընթացքում աշակերտները հեշտությամբ սովորում են որևէ բանաստեղծության ռիթմը կամ արձակ բնագրի կարդալու եղանակը, հնչերանգը, ձայնի բնույթն ու ուժգնությունը, ելևէջներն ու դադարները:

Տեքստի արտահայտիչ ընթերցման մշակման, ընթերցանության՝ կարդալու որակական հատկանիշների զարգացման նպատակով, կարելի է առաջադրել «Խմբային ընթերցանություն» կամ «Ռադիոընդունիչ» մեթոդական հնարները: Դրա համար աշակերտներին նախապես

հանձնարարվում է նյութին ծանոթանալ, սովորել վարժ կարդալ,որից հետո նոր կարելի է կիրառել հետևյալ աշխատանքը .

- Բանաստեղծությունն ընթերցեք դանդաղ՝ հստակ արտաբերելով բոլոր բառերը։
- Բանաստեղծությունն ընթերցե՛ք արագ։
- Բանաստեղծությունն ընթերցե՛ք սկզբում արագ,ապա կամաց-կամաց դանդաղեցնելով։

Կարելի է կիրառել նաև «Ռադիոընդունիչ» մեթոդական հնարը՝ ձայնի տարեղանակների օգտագործմամբ։ Օրինակ՝ բարձր, ցածր, ընդհատ-ընդհատ վանկերով և այլն։[7]

Արտահայտիչ կարդալու ուսուցման համար օգտակար են նաև արդեն մշակված ու ծանոթ բնագրերի վերընթերցումները, ոտանավորի ու արձակ հատվածների անգիր արտասանելը, չափածո նյութերի բեմականացումը, ինչպես նաև արտահայտիչ կարդալու որոշ նորմերի մատչելի կանոնների բացատրումը և այլն։ Այստեղ հիմնական շեշտը պետք է դնել գիտակցականության, կետադրությունը ճիշտ հասկանալու, ձայնը ճիշտ կառավարելու և այլ առանձնահատկությունների յուրացման վրա։ Արտահայտիչ ընթերցանության ուսուցման տեսակետից հսկայական նշանակություն ունեն առակները, որոնց ընթերցման ժամանակ աշակերտներն անպայմանորեն ստիպված են լինում փոխել ձայնը, արտասանելու եղանակը, ձայնով արտահայտել գործող անձանց տարաբնույթ զգացմունքներն ու ապրումները։

Աշակերտները պետք է հասկանան, որ նկարագրությունները, պատմությունները և հեքիաթները պետք է կարդալ դանդաղ, հանգիստ, ցածր ձայնով, արագ զարգացող գործողությունները արագ, բարձր և ուժեղ ձայնով, զայրույթը, հրամանը, կոչը, պահանջը, սպառնալիքն ու պարսավանքը արտահայտվում են արագ տեմպով՝ բարձր և ուժեղ ձայնով, փաղանքշանքը, համոզելը, տխրությունը, թախիծը և տանջանքը՝ դանդաղ տեմպով, ցածր ու թույլ ձայնով։ Արտահայտիչ կարդացած բնագիրնն ավելի հեշտ ու խորն է ըմբռնվում, որովհետև պարզ կերպով շեշտվում են նրանում եղած գլխավոր և երկրորդական մտքերը, գործող անձերը, նրանց տարբեր հոգեվիճակներն ու հույզերը. նույնիսկ տարբեր ձևերով են ներկայացվում բնության տարբեր հատվածներն ու երևույթները։

Արտահայտիչ ընթերցողին երեխաներն ավելի ուշադիր են լսում, արտահայտիչ ընթերցված նյութն ավելի հեշտ ու սիրով են սովորում և իրենք էլ ձգտում են նույն ձևով վերարտադրել։

Տարրական դասարաններում արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է ընկած լինի հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդալու գիտակցականությունը։ Կարդալու արտահայտչականությունը այստեղ պայմանավորված է ինչպես առոգանության ու արտահայտչական նշաններից բխող դադարներով ու

առոգանության փոփոխությամբ, այնպես էլ բնագրի բովանդակությունից բխող հնչերանգով ու ձայնի ելևէջների փոփոխությամբ։

[7]Կ.Չիբուխչյան«Ինչպես պլանավորել մայրենիի դասերը 3»,2017,էջ՝90,208։

ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տարրական դասարաններում կարդալու արտահայտչականությունը պայմանավորված է ինչպես առոգանության ու արտահայտչական նշաններից բխող դադարներով ու առոգանության փոփոխությամբ, այնպես էլ բնագրի բովանդակությունից բխող հնչերանգով ու ձայնի ելևէջների փոփոխությամբ։

Աշակերտները ընթերցանության դասերին կարդում են գեղարվեստական ստեղ-ծագործություններ, որոնց մեջ շատ են կետադրական նշանները, ուստի հարմար առիթ է լավ ըմբռնել և կիրառել գրության մեջ։ Այսպիսով, տարրական դասարաններում ամենից առաջ արտահայտիչ կարդալու կարողության զարգացման նպատակ է հետապնդում։ Անհրաժեշտ է նշանները ճանաչել ու ճիշտ վերարտադրել։

Կետադրական նշաններիը որոշակիորեն կապվում են նյութի բովանդակության հետ և իրենց կոնկրետ իմաստն արտահայտում տվյալ բնագրում։ Առաջին դասարանում երեխաները պետք է բնագրում ցույց տան կետադրական (վերջակետ, ստորակետ, հարցական, բացականչական) նշանները, անվանեն դրանք, թելադրություն գրելիս, նշանի անունը լսելիս, ճիշտ նշանակեն, զգան և հասկանան նախադասության վերջը, դնեն վերջակետ, իսկ հաջորդ միտքը սկսեն մեծատառով։

Երկրորդ դասարանում աշակերտները պետք է ճանաչեն հայերենի կետադրության՝ տրոհության, առոգանության ու բացահայտության բոլոր նշանները։

Երրորդ, չորրորդ դասարաններում պետք է խորացնել ու ամրապնդել հայերենի կետադրական բոլոր նշանների ճանաչումը։

Կետադրության ծանոթացումը սկսվում է այբբենական շրջանում՝ որպես կենդանի խոսքի բաղադրիչ մասերից մեկը։ Եթե տառերը ուսուցանվում են, որպես խոսքի բաղադրիչ մասերի կամ տարրերի արտահայտման միջոց, ապա կետադրական նշանները՝ որպես կենդանի խոսքի տարրերի հնչերանգների կամ հնչարտաբերման ձևերի ու դադարների արտահայտման միջոց։ Աշակերտները պետք է իմանան, որ կարդալու ժամանակ վերջակետի հանդիպելիս պետք է դադար տալ,իսկ լսածը գրի առնելիս՝ կենդանի խոսքի մեջ նկատվող այդ դադարները պետք է արտահայտել վերջակետով։

Կետադրության ուսուցման մեջ ամենադժվարը ստորակետի ուսուցումն է,որովհետև կապված է շատ կանոնների հետ։ Տարրական դասարաններում ասվում է, որ ստորակետի ժամանակ դադարը պետք է լինի քիչ, միջակետի ժամանակ ավելի, իսկ վերջակետի ժամանակ՝ երկար։Աշակերտներին պետք է բացատրել, որ նրանց սովորած կետադրական նշանները մեծ մասամբ խոսքի մեջ իրենց ձայնային կամ արտասանական արտահայտությունն ունեն։ Դա

երբեմն արտահայտվում է այս ու այն չափի կամ տևողության դադարներով (վերջակետ, ստորակետ, միջակետ) կամ ձայնի ու արտասանության հնչերանգի փոփոխումով (հարցական, բացականչական նշաններ և շեշտ), դրա համար էլ առաջինները կոչվում են տրոհության նշաններ, իսկ երկրորդները՝ առոգանության նշաններ։ Այստեղ կարելի է կիրառել «Հույզեր և զգացմունքներ» մեթոդական հնարը, որի կիրառման համար փոքրիկ, գունավոր թղթերի վրա գրել ժողովրդական ստեղծագործությունների անվանումներ և դնել սեղանին։ Ցանկալի է վերցնել հեքիաթները։ Նրանք լայն հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին՝ աշխատանքներ տանելու խոսքային արտահայտչականության կարևորագույն միջոցի՝ հնչերանգի ճիշտ ընտրության շուրջ։ Առհասարակ, հումորային ժանրի հեքիաթներն արտահայտիչ սովորեցնելու համար կարևոր է ուղղորդել աշակերտներին ճիշտ ընտրելու հնչյունային արտահայտչականության միջոցները (ձայն, հնչերանգ, արագություն, դադար, տրամաբանական շեշտեր, մեղեդայնություն)։ Իսկ հնչերանգի ճիշտ ընտրությունը վկայում է, որ երեխան ընկալել է տեքստի իմաստը, հեղինակի ասելիքը, հումորը, ծաղրը, հրամանը, կոչը, հորդորը, վախը, ցավը, հերոսի բնավորությունը, նրա արարքներն ու ստեղծված իրավիճակը և այլն։ Այդ նպատակով կարելի է առաջարկել տեքստն ընթերցել տարբեր հնչերանգներով։

Սովորողները բաժանվում են խմբերի։ Յուրաքանչյուր խմբից մեկ հոգի մոտենում է և վիճակահանությամբ ընտրում է ժողովրդական ստեղծագործություններից որևէ մեկը և նստում։ Խմբին տրվում է 5 րոպե նյութն ուսումնասիրելու համար։ Գրատախտակի մոտ կանգնած ուսուցչուհին ձեռքին պահում է քարտեր,որոնց վրա նկարված են արտասանական երանգավորման տեսակները։ Ուսուցչուհին ցույց է տալիս որևէ քարտ, խմբերը իրենց ընտրած ստեղծագործությունները պետք է կարդան ցույց տված համապատասխան արտասանական երանգավորման տեսակով։[8]

Չնայած, որ իրենց ծանոթ որոշ նշաններ (չակերտ, գիծ, ստորակետ-գիծ) խոսքի մեջ իրենց ձայնային կամ հնչերանգային արտահայտությունը չունեն, դրանք միայն բացահայտում, ցույց են տալիս, թե ինչպիսին է մեր կարդացած խոսքը, ով է ասել այն, ինչպես պետք է կարդալ, որ ընդհանուր շարադրանքից տարբերվի։ Դրա համար էլ կոչվում են բացահայտության նշաններ։

Բանավոր խոսքի արտասանական հատկանիշները՝ ձայնի ելևէջները, դադարները, խոսողի դիմախաղերը, շարժումները, մեծապես նպաստում են մտքի ճիշտ հաղորդմանը, համապատասխան վերաբերմունքի արտահայտմանը։ Գրավոր խոսքը, լինելով բանավոր խոսքի գրային պատկերը չունի այդ առավելությունները, այն է՝ բանավոր խոսքի հնչերանգային նրբերանգներն ու ներգործության ուժը։ Այսպիսով, այս բացը լրացնում են

[8]Կ.Չիբուխչյան«Ինչպես պլանավորել մայրենիի դասերը 4»,2018,էջ՝332,400,

կետադրական նշանները, որոնք թեև նպաստում, օժանդակում են գրավոր խոսքի ճիշտ արտահայտմանն ու ընկալմանը,բայց և չեն կարող լիովին բացահայտել բանավոր խոսքի բոլոր նրբերանգները։

Վերը նշվածից պարզ է դառնում ,որ տարրական դասարաններից սկսած արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում ընկած է հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը։Նրանք կապվում են նյութի բովանդակության հետ և իրենց կոնկրետ իմաստն են ստանում տվյալ բնագավառում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտենք, որ կարդալու կարողությունն առաջին հերթին ձևավորվում է մայրենիի դասերին: Ասում են՝ «Չսովորելու արմատը՝ չկարդալն է»: Այս բանաձևումը փաստում է, որ կարդալու կարողության հիմքերը դրվում են տարրական դասարաններում, ուստի անհրաժեշտ է, որ հետևողական ու մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքի միջոցով սովորողի մեջ ձևավորել կարդալու այնպիսի կարողություն, որը ժամանակի ընթացքում վերածվի անհրաժեշտ հմտության՝ դյուրին դարձնելով կրտսեր դպրոցականի համար բնագրերի ընթերցումը, ընկալումն ու վերարտադրումը: Հակառակ դեպքում՝ մենք նրան կզրկենք գիտության, հասարակական կյանքի և այլնի վերաբերյալ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, ինչպես նաև տեղեկատվության տարբեր աղբյուրներից օգտվելու հնարավորություններից:

Իսկ ուսումնառության հետագա տարիներին, երբ օրեցօր ավելանում է ուսումնական ծանրաբեռնվածությունը, կարդալը դառնում է ուղղակի անփոխարինելի միջոց՝ կրթական այլևայլ խնդիրների լուծման համար:

Հենց այս նկատառումով էլ հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ ուսումնական պարապմունքների առաջին իսկ օրերից, գրաճանաչության ուսուցումը կապվում է կարդալու ուսուցման, երեխայի մեջ կարդալու կարողության մշակման հետ՝ որպես նրա ընդհանուր զարգացման և մտավոր առաջընթացի հզոր խթան: Այսինքն ՝ կարդալու կարողությունը երկարժեք է, մի կողմից այն խիստ կարևոր գործնական կարողություն է, մյուս կողմից՝ սովորողի ինքնազարգացման ու ինքնակրթման միջոցով գիտելիքներ ձեռք բերելու հզոր զենք: Այս է պատճառը, որ տարրական դասարաններում կարդալու հմտությունների ճիշտ մշակումն ու կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելը՝ ուսուցչի ամենահիմնական խնդիրներից է: Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք խորությամբ և ճշտությամբ ընկալել, հասկացել են ընթերցած ստեղծագործության գաղափարը, բովանդակությունը, ենթատեքստը, տեղի ունեցող դեպքերը, դրանց մեջ պատճառահետևանքային կապերը, ինչպես և հեղինակի վերաբերմունքը հերոսների նկատմամբ:

Մինչև բնագրի արտահայտիչ ընթերցման նախապատրաստումը պետք է՝

1. դասարանում դիտարկել ստեղծագործական վերնագիրը. պարզել նրա տրամաբանական կապը բնագրի բովանդակության հետ, որոշել բնագիրը բարձրաձայն կարդալու արտահայտչամիջոցները, ընտրել դրանցից ամենանպատակահարմարը

2. երկխոսության կամ հարց ու պատասխանի ձևով զրույց կազմակերպել բնագրի շուրջ՝ դուրս բերելով բնագրի «թաքնված» հարցերը, որոնցով աշակերտները պիտի ընկալեն բնագրի խորությունը
3. ուսուցչի օգնությամբ, հուշումներով բնագրի վրա կատարել նշումներ, ընդգծել կարևոր մտքերը, հենակետային բառերը, որոշել հանգուցային նախադասությունները և դրանց բարձրաձայն ընթերցման առոգանական երանգները
4. աշակերտները պետք է որոշեն ստեղծագործության գլխավոր գաղափարը և այն վերարտադրելու պլանը

Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորման գործընթացը բազմաշերտ է։ Այն իրականացնելու համար անհրաժեշտ է տանել ամենօրյա համակարգված աշխատանք՝ հաջորդաբար լուծելով որոշակի խնդիրներ.

1. կատարել բառային աշխատանք, որոշել հենակետային բառերը, մեկնաբանել անծանոթ բառերն ու արտահայտությունները, տվյալ բնագրում գտնել բազմիմաստ բառերի նշանակությունը
2. վերլուծել բնագիրը՝ բացահայտելով դեպքերի ընթացքը, գործողությունների զարգացման պատճառահետևանքային կապերը
3. որոշել գործող անձանց բնավորությունները, զգացմունքները և տրամադրությունը
4. պարզաբանել ստեղծագործության գաղափարը, ենթատեքստը և հեղինակի վերաբերմունքն այս ամենի նկատմամբ

Արտահայտիչ ընթերցանությունը կարևոր նախապայման է արտադասարանական ընթերցանություն կազմակերպելու համար, ուստի անհրաժեշտ է հետևել արտահայտիչ ընթերցանությանը ներկայացվող պահանջներին՝ արտադասարանական ընթերցանության ժամերն ավելի արդյունավետ կազմակերպելու համար։

Անհրաժեշտ է պարզորոշ ուրվագծել այն դժվարությունները, որոնք խանգարում են աշխատանքի արդյունավետության ապահովմանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Բահրաթյան,«Մանկավարժական թերթ»,1879,էջ՝32-33։
2. Գ. Էդիլյան ,Հայոց լեզվի մեթոդիկա ,Թիֆլիս,1923,էջ՝122։
3. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006,էջ116։
4. «Ընթերցանության կարողությունների ձևավորում տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա», դասավանդման ձեռնարկ։ Հրապարակվել է «Քայլ առ քայլ » հիմնադրամի կողմից, 2014թ., էջ՝33։
5. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,»Նախաշավիղ» հանդես, Երևան, 2013:/էջ3-10/
6. Կ.Չիբուխչյան«Ինչպես պլանավորել մայրենիի դասերը 3»,2017,էջ՝90,208։
7. Կ.Չիբուխչյան«Ինչպես պլանավորել մայրենիի դասերը 4»,2018,էջ՝332,400։
8. «Մանկավարժական թերթ», 1878, թիվ 3, թիվ 4։
9. Ջ.Գյուլամիրյան, Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները,«Նախաշավիղ»,2001,թիվ 3-4,էջ 30
10. Տեր-Գրիգորյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980։